ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում**

Հետազոտող ուսուցիչ՝ Ալինա Պետրոսյան

Վաղարշապատի Մ. Գորկու անվան 5 ավագ դպրոց

Մենթոր
Ուսուցիչ՝ Անի Իսկանդարյան

Արմավիր 2022

Բովանդակություն

1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ..... 6
2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ..... 8
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ..... 13
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ԱՄՓՈՓՈՒՄ..... 15
Եզրակացություն 22
Օգտագործված գրականության ցանկ 24

Լեզվի ծագման հարցը մեծ հետաքրքրություն է առաջացրել շատ վաղ ժամանակներից: Տարբեր մասնագետներ տարբեր բացատրություններ են տվել լեզվի ծագմանը, սակայն այդ պատասխաններից ոչ մեկը չի կարելի կատարյալ համարել:

Պատմության ընթացքում շատ հասարակություններում հավատում էին, որ լեզուն աստծու կողմից պարգև է մարդկությանը: Դրա մասին են վկայում լեզվի մասին տարբեր ժողովուրդների նախնական պատկերացումները արտացոլված առասպելների, հեքիաթների, լեգենդների մեջ: Լեզուն դիտվել է նույնիսկ որպես մոգական երևույթ, այսինքն դրա միջոցով բուժել են, անիծել և այլն: Լեզվին վերագրվել է աստվածային ծագում, սակայն աստվածաշնչյան մեկնաբանությունում կա հակասական պատմություն լեզվի ծագման վերաբերյալ: §Ծննդոց գրքի¦ առաջին գլխում ասվում է, որ Աստված ստեղծեց երկիրը խոսքի, բառերի միջոցով: Երկրորդ գլխում ասվում է, որ արարչագործությունը տեղի է ունենում առանց խոսքի, այսինքն՝ Ադամին ստեղծելուց հետո Աստված բոլոր արարածներին բերում է նրա մոտ, որ նա նրանց անուններ տա, այսինքն՝ ըստ այս տեսակետի՝ Աստված ստեղծում է մարդուն, մարդը՝ լեզուն: Բաբելոնյան աշտարակաշինությամբ էլ բացատրվում է լեզուների բազմազանության խնդիրը:

Լեզուն դիտվում է որպես նշանային համակարգ, քանի որ լեզվի բառերը, նախադասությունները հանդես են գալիս որպես մեր գիտակցության մեջ գոյություն ունեցող արտաքին աշխարհի առարկաների մասին հասկացությունների, դատողությունների նշաններ:

Լեզուն մտքերի և հնչյունների միասնություն է, որում հնչյունները ծառայում են մտքերը ներկայացնելուն: Հաղորդակցման նպատակը մտքերը հաղորդելն է: Սակայն փաստացի կերպով մարդիկ հաղորդում և ընկալում են հնչյուններ: Դրանց շնորհիվ հնչյունները ընկալողը հասկանում է, թե ինչ միտք է ցանկացել իրեն հաղորդել այն մարդը, որը արտաբերել է այդ հնչյունները: Այդ ըմբռնումը հնարավոր է, քանի որ և° հաղորդողի, և° ընկալողի գիտակցության մեջ մտքի միևնույն տարրերի հետ կապված են միևնույն հնչյունները: Որպես

հնչյունների և մտքի միասնություն՝ լեզվի տարրերը դառնում են նշաններ, իսկ լեզուն ամբողջությամբ մի նշանային համակարգ:

1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Սովորողի մեջ գիտելիքի, կարողությունների, հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների ձեռք բերման պահանջ ձևավորելու կարևոր պայման է դրական խթանը, իսկ օտար լեզվի ուսումնասիրության պարագայում կարևորագույն պայմանը՝ երկխոսությունն է: Հենց այս երկխոսության միջոցով և ընթացքում էլ ձևավորվում է սովորողի աշխարհահայացքը: Գիտելիքը, կարողությունը և հմտությունը հանդես են գալիս արդեն ոչ որպես միակ նպատակ, այլ որպես մասնագիտական գործունեություն իրականացնելու միջոց, գործիք:

Դասի յուրաքանչյուր փուլում, սովորողի կամ առարկայական ծրագրի պահանջների ապահովման գործընթացում գլխավոր դերակատարը սովորողն է: Ուսուցիչը այն հաղորդիչն է, որը կապում է երեխային առարկայի հետ, նրան ներքաշում երկխոսության մեջ: Ուսուցումուսումնառություն երկխոսության ընթացքում անչափ կարևորում եմ սովորողի արժեքային համակարգի ձևավորումը, նրա բարոյական նկարագրի կերտումը: Երկխոսության համար բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընտրել դասավանդման այնպիսի մոտեցումներ, որոնք կխթանեն հոգևոր, մտավոր և բարոյական ինքնուրույնություն ունեցող սովորողի ակտիվ ու անկաշկանդ գործունեությունը: Օտար լեզվի դասն ունի իր առանձնահատկությունները, և ի տարբերություն մյուս առարկաների՝ որպես հիմնական նպատակ առաջ է քաշվում սովորողների հաղորդակցական ունակությունների ձևավորումը:

Որո՞նք են առարկայի առանձնահատկությունները:

Առաջին. լեզուն (մայրենի, թե՝ օտար) ծառայում է որպես շփման, շրջապատող իրականության վերաբերյալ տեղեկատվության ընդունման և փոխանցման միջոց: Եվ առարկայի ուսուցումը դպրոցում պետք է դիտել հենց այս տեսանկյունից:

Երկրորդ. օտար լեզվի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ծանոթանալ օտարալեզու երկրի մշակույթին, ընդարձակել մտահորիզոնը,

տիրապետել առարկաների, երևույթների, նրանց կապերի ու հարաբերությունների մասին մտքեր արտահայտելու միջոցներին: Այդ միջոցներն արտահայտվում են երկու ձևով՝ գրավոր և բանավոր: Հենց սրանք էլ դրվում են օտար լեզվի ուսուցման հաղորդակցական հմտությունների ձևավորման հիմքում:

Երրորդ. լեզուն, որպես շփման միջոց, պետք է մշտապես պահել, այսինքն՝ միշտ պատրաստ ցանկացած իրավիճակում գործածելու համար: Այդ իսկ պատճառով սովորողի կողմից յուրացված նյութը պետք է մշտապես կիրառվի պրակտիկայում՝ իր բանավոր և գրավոր ձևերով:

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ուսուցման մեթոդները ուսումնական նյութի կազմակերպման միջոցներն են, որոնք փոխկապակցված են ուսուցչի և սովորողների գործունեությամբ: Մեթոդը հանդիսանում է կապող օղակ նախատեսված նպատակների և վերջնական արդյունքների միջև: Մեթոդներ ասելով պետք է հասկանալ ուսուցչի և սովորողների փոխհամաձայնեցված գործունեության միջոցները ուսուցման գործընթացում, որոնք ուղղված են սահմանված նպատակներին հասնելուն: Մեթոդների հիմնական բաղադրիչները հանդիսանում են եղանակները: Եղանակ ասելով հասկանում ենք գործունեություն առարկայի հետ, ինչպես նաև բանավոր և գրավոր գործունեություն:

Եթե սովորողները կատարում են իրենց առջև դրված խնդիրը, ապա կարելի է համարել, որ նրանք տիրապետում են ուսումնական աշխատանքի եղանակներին:

Ներկայումս յուրաքանչյուր սովորող հետաքրքրված է լեզվի պրակտիկ իմացությամբ: Հաղորդակցվելու ընթացքում սովորողը պետք է հնարավորություն ունենա ազատ արտահայտել իր մտքերն ու զգացմունքները, չվախենա քննադատվելու կամ սխալվելու վտանգից, լինի բոլորի ուշադրության կենտրոնում:

Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող սովորողները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի դաս վարող ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող: Օտար լեզվի ուսուցիչը պետք է կարողանա դասի ընթացքում՝

- ✓ ապահովել երկխոսության իրավիճակ (քննարկվող նյութի մատչելիություն, հետաքրքրություն, բարյացկամ, հանդուրժող, փոխհամաձայնության, փոխօգնության մթնոլորտ).
- ✓ ապահովել կոլեկտիվ գործունեություն (անհատական, զույգերով, խմբերով).

- ✓ խթանել սովորողի հետաքրքրվածությունը իր գործունեության արդյունքով.
- ✓ ապահովել անձնային կողմնորոշմամբ շփումներ (հաշվի առնելով սովորողի հետաքրքրությունները, անձնական և հոգեբանական առանձնահատկությունները).
- ✓ սահմանել յուրացվող նյութի խելամիտ ծավալ (ըստ սովորողների տարիքային խմբի և պատրաստվածության):

Սովորողները լեզվի տիրապետման և օգտագործման դասերին տարբերում են բանավոր խոսք կառուցելու, կարդալու, գրելու, ստեղծագործելու, հաղորդակցվելու իրենց ունակություններով, ուստի պետք է ուսուցման գործընթացում կիրառել երեխայակենտրոն մոտեցում Այսօր շատ արդյունավետ է համագործակցելով ուսուցանելը: Այս մոտեցման հիմնական գաղափարը սովորողների հետ համատեղ որևէ առաջադրանք իրականացնելու համար հարմար պայմաններ ապահովելն է, ինչը ամրապտնդում է լեզվի տիրապետումը և դրա կիրառումը գործնականում: Համագործակցության ողջ գործընթացում պետք է կարևորվեն սովորողի ինքնուրույն ճանաչողական հետաքրքրությունները:

Միջառարկայական կապ ստեղծելու շնորհիվ դասի ընթացքում երեխաների մոտ զարգանում են ճանաչողական ակտիվությունը, երևակայությունը, նրանք սովորում են քննարկումներ, հարցազրույցներ վարել, պնդել իրենց տեսակետը, փաստարկներ բերել: Նմանատիպ առաջադրանքները ստիպում են երեխային հասկանալ, որ խմբի հաջողությունը կամ անհաջողությունը կախված իրենցից յուրաքանչյուրից: Ուսուցչի և սովորողի համատեղ աշխատանքը և ստեղծագործական միջավայրում արարումը տալիս են իրենց առատ պտուղները: Միակողմանի կապը վերածվում է եռակողմանիի. ուսուցիչսովորող, սովորողուսուցիչ, սովորողսովորող:

Օտար լեզուների ուսուցման և դրա օգտագործման մեջ մասնագետներն առանձնացնում են հետևյալ ճանաչողական ոճերը.

- դաշտային կամ բնագավառի անկախություն (field independence). դա ենթադրում է անձի՝ մի շարք շեղող գործոններից առարկան առանձնացնելու ունակությունը,
- կիսագնդերից մեկի գերակայություն (leftand rightbrain functioning). երբ գերիշխում է ձախ կիսագունդը, ապա մարդն ունի վերլուծական միտք, մտքերը շարադրում է դեդուկտիվ եղանակով, իսկ աջ կիսագնդի գերակայության ժամանակ մտածելակերպը ինդուկտիվ է[1]:

Ըստ այդմ, ամեն մի սովորող ունի միայն իրեն հատուկ ճանաչողական ոճ, որով և պայմանավորվում է ուսումնառության ոճի և ուսումնական ռազմավարությունների ընտրությունը: Ճանաչողական մոտեցման պարագայում առանցքային նշանակություն ունի ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների ընտրության հիմնախնդիրը: Այդ համատեքստում կարևոր է հստակեցնել, թե ռազմավարության ինչ սահմանումներ են համարժեքորեն արտացոլում ուսուցման գործընթացի առանձնահատկությունները:

Լեզուների ուսուցման տեսական հիմքերը մշակելիս գիտնականները կարևորում են Տվան Դեյքի մոտեցումը, որն ստեղծել է խոսույթի մշակման ճանաչողական կաղապարը, որով գիտնականը նկարագրել է տասից ավել բազմամակարդակ ռազմավարություններ՝ թեմայի ներմուծման, հասկանալու, մտածողության, խոսույթի, խոսույթի սերման և այլն[2]:

Ըստ այդմ, ամեն մի սովորող ունի միայն իրեն հատուկ ճանաչողական ոճ, որով և պայմանավորվում է ուսումնառության ոճի և ուսումնական ռազմավարությունների ընտրությունը: Ճանաչողական մոտեցման պարագայում առանցքային նշանակություն ունի ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների ընտրության հիմնախնդիրը: Այդ համատեքստում կարևոր է հստակեցնել, թե ռազմավարության ինչ սահմանումներ են

[1] Brown H. Principles of language learning and teaching. Englewood Cliffs, NJ, 1994, Prentice Hall Regents, p. 104-113.

[2] Т. А. ван Дейк. Язык. Познание. Коммуникация, М., 1989, с. 312.

համարժեքորեն արտացոլում ուսուցման գործընթացի առանձնահատկությունները:

Ջ. Բրունները «ռազմավարություն» հասկացությունը դիտարկում է որպես հոգեկերտվածքային գործառնությունների համակազմ[3]: Ճանաչողական մոտեցումն օտար լեզուների ուսուցման ոլորտում ձևավորվել է ի հակադրություն վարքաբանականի: Այն հիմնվում է հետևյալ դրույթների վրա՝ մտածողության զարգացումը լեզվի տիրապետման անքակտելի մասն է: Լեզվի ուսուցումը չի հիմնվում միայն լեզվական միավորների ընկալման և մեխանիկական մտապահման վրա: Ըստ ճանաչողականկառուցողական մոտեցման՝ սովորողները պետք է ներգրավվեն ճանաչողության ակտիվ գործընթացի մեջ, լինեն ուսուցման եռանդուն մասնակիցներ: Ընդ որում՝ անհրաժեշտ է հաշվի առնել նրանց անհատական հետաքրքրությունները և առանձնահատկությունները:

Մեթոդաբանների շրջանում ընդունված է ճանաչողական մոտեցումը քերականականթարգմանական, գիտակցական մեթոդներով իրացնելու դրույթը: Սակայն հաղորդակցական մոտեցման սկզբունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա հիմքում նույնպես ընկած են ճանաչողականի հիմնադրույթները: Պատահական չէ, որ օտար լեզուների ուսուցման մեթոդաբանության մեջ հաճախակի է շրջանառվում հաղորդակցական ճանաչողական մոտեցումը, որից ածանցվում են գործաբանական ճանաչողական, խոսութային ճանաչողական մոտեցումները:

Ընդհանուր առմամբ, ճանաչողականհաղորդակցական մոտեցումը ձևավորվել է հումանիստականի շրջանակում, որը, ինչպես հայտնի է, նպաստեց անձնակենտրոն, անձնակողմնորոշիչ, անձնուղղորդ մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների ներդրմանը: Այսպես, Ք. Ռոջերսը առաջադրեց այն դրույթը, ըստ որի, մարդը նախ և առաջ զգայական էակ է[4]: Ք. Ռոջերսի և նրա համախոհների հայեցակարգերը նպաստեցին հաղորդակցական մոտեցման այն

---

[3] Bruner J. S., Goodnow J. J. and Austin G. A. A Study of Thinking. Transaction Publishers, 1995. P.330.

[4] Rogers C. Personal thoughts on Teaching and Learning, Merrill-Palmer Quart, 1957, b. V, 3 (Summer), p. 241-243.

սկզբունքի ձևավորմանը, ըստ որի՝ անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների ուսուցման դրական զգայական մթնոլորտի ստեղծման պայմանները և գործոնները: Ակնհայտ է, որ ուսուցման դրական զգայական մթնոլորտը անհրաժեշտ նախապայման է գիտելիքների արդյունավետ ներմուծման, յուրացման և ամրապնդման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Ուսուցիչը լայն հնարավորություններ ունի միջառարկայական կապ ստեղծելու ոչ միայն գրականության այլ նաև բոլոր գիտությունների հետ: Վերջին շրջանում մանկավարժական գրականության մեջ ավելացել է համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետությունը: Ինտերակտիվ տերմինը կարելի է պարզաբանել հետևյալ կերպ՝ անգլերենից՝ ինտեր-փոխադարձ, ակտ-գործողություն: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ: Այսպիսով ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման սովորողի ազատության վրա: Չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի, ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին և օգտագործել հետաքրքիր մեթոդներ: Ուսուցիչն ազատ է մեթոդի ընտրության հարցում, սակայն այդ ընտրությունը չի կարող կամայական լինել, քանի որ մեթոդի կիրառման ժամանակ բուն նպատակը ոչ թե պարզապես դասն աշխուժացնելն է, կամ բաց դասի ընթացքում գործընկերների առջև մանկավարժական վարպետությամբ փայլելը, այլ առաջին հերթին մեթոդական ողջ հնարավորությունների կիրառմամբ ուսուցման նպատակների իրականացմանը հասնելը:

Դասի պլանավորում

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից, որը կարելի է պատկերացնել հետևյալ հաջորդականությամբ՝

1. նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ,
2. բուն դասը,
3. վերլուծական աշխատանք, որը կատարվում է դասից հետո:

Դասից առաջ- Արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից պատրաստվելը: Անհրաժեշտ է նյութին մանրամասն ծանոթանալ և պատկերացնել դասի ողջ ընթացքը. կարևոր է, թե ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով, ու՞ր ենք ուզում հասնել:

Նախապատրաստության կարևոր մաս է կազմում նաև դասասենյակի համապատասխանեցումը տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին: Ուսուցիչը պետք է դասավորի նյութերը, համապատասխանի կահավորանքը և համոզվի արդյո՞ք օգտագործվելիք տեխնիկական միջոցները սարքին են: Հնարավոր է, որ կարիք լինի փոխելու մեթոդների հաջորդականությունը: Կան որոշակի հարցեր, որոնց շուրջ դասից առաջ մտածելով ուսուցիչը հստակ կարող է գնահատել իր դասին պատրաստ լինելու պլանը:

1. դասի նպատակի սահմանումը և ակնկալվող արդյունքների հստակեցումը,

2. որքանո՞վ են իմ ակնկալումները ու սպասումները իրատեսական,

3. ինչպե՞ս կարող է նա համոզվել, որ աշակերտները պատրաստ են վարժությանը,

4. ինչպե՞ս պետք է կառուցի դասի ընթացքը,

5. որքանո՞վ է իրատեսական ժամանակը,

6. ինչպե՞ս կարող է գնահատել աշակերտների հմտությունների ձեռքբերումը,

7. ի՞նչ է ուզում, որ աշակերտները զգան,

8. ինչպիսի՞ վերաբերմունք է ուզում ձևավորել:

Այս բոլոր հարցերի պատասխանները թույլ կտան ուսուցչին հստակ որոշելու դասավանդման մեթոդը:

Բուն դասը-ընթացքը բաժանում են հետևյալ փուլերի՝

1. Խթանման փուլ,
2. Իմաստի ընկալման փուլ,
3. Կշռադատման փուլ(ԽԻԿ):

Խթանման փուլի հիմնական նպատակներն են՝

1. նախապատրաստել սովորողներին նոր դասի ընկալմանը, որը կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միջոցով,

2. բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները,

3. ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավվելով նրանց քննարկվելիք նյութի մեջ,

4. աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ԱՄՓՈՓՈՒՄ

Օտար լեզուներ սովորում են ամենատարբեր շարժառիթներով՝ սկսած անձնական հետաքրքրասիրությունից ու նոր շփման հնարավորությունից մինչև մեծ բիզնես ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ: Օտար լեզվի տիրապետման և օգտագործման նպատակների բազմազանությունը, ինչպես նաև սովորել ցանկացողների մեծ քանակն ու նրանց անձնային առանձնահատկությունները պատճառ են դարձել, որպեսզի ստեղծվեն օտար լեզվի ուսուցանման և յուրացման նորանոր ուղղություններ, տարատեսակ մոտեցումներ, բազմաթիվ մեթոդներ և պրակտիկաներ[5]:

Ժամանակակից աշխարհում օտար լեզվի իմացությունն ու դրան տիրապետումը անհրաժեշտություն է: Օտար լեզվի իմացությունը հարստացնելու և հղկելու համար հարկավոր է կիրառել հետևյալ մեթոդները:

1. Լսել աուդիոգրքեր, որը հնարավորություն կտա հասկանալ լեզվի արտասանությունն ու էմոցիոնալ երանգները: Ունկնդրումը հեշտացնելու համար պետք է ընտրել այնպիսի գիրք, որը կարդացվել է արդեն մայրենի լեզվով:

2. Հնարավորինս շատ բառեր սովորել, լեզուն բառակույտ չէ, այլ կենդանի օրգանիզմ:

3. Ընտրել այն ֆիլմերն ու գրքերը, որոնք առավել հետաքրքիր են:

4.Հնարավորություն ստանալ մեկ դասի ընթացքում սովորել մեկ ամբողջական թեմա, այն մասերի մի բաժանեք:

5.Պարապել շաբաթական 2 անգամ 2 ժամով, այլ ոչ թե ամեն օր՝ կես ժամով:

6.Նոր պարապմունքը սկելուց կրկնել հին դասը, դա կզբաղեցնի ընդամենը 510 րոպե, սակայն այն հիմնարար կերպով կմնա մարդու հիշողության մեջ:

---

[5] КолесниковаИ.Л., ДолгинаО.А.,Англо-русский терминологический справочник по методике преподавания иностранных языков, СПб.: Изд-во «Русско-Балтийский информационный центр „БЛИЦ"», «Cambridge University Press», 2001 г., с. – 19-21.

Օտար լեզվի իմացությունը քրտնաջան և երկարաժամկետ աշխատանք է պահանջում:

Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրել ենք օտար լեզուների ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական նոր չափորոշիչի՝ օտար լեզուների (տվյալ դեպքում անգլերեն) 3-6-րդ դասարանների առարկայական ծրագրի բովանդակային միջուկը՝ պայմանավորված երգի՝ որպես մեթոդի առկայությամբ, անդրադառնալով յուրաքանչյուր թեմայի շրջանակներում համապատասխան արժեքների ձևավորման/զարգացման պահանջին: Ուսումնասիրության արդյունքում դուրս ենք բերել երգերի և երաժշտական կատարումների ցանկ, համապատասխան օտար լեզուների նորագույն չափորոշչում առաջարկվող թեմաներին և դրանց դասավանդման շրջանակներում համապատասխան արժեքների զարգացման շեշտադրմանը: Յուրաքանչյուր երգից հետո առաջարկել ենք համապատասխան վարժության օրինակ, միտված տվյալ արժեքի զարգցմանը: Ուսումնասիրության արդյունքներն են՝

3-րդ դասարան՝

1. Թեման է՝ **Ես և իմ ընկերները**: Այս Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ անհրաժեշտ թեմատիկ բառապաշարը (my classmates, who's my friend? new acquaintances (outside, in the library etc.)), տրված քերականական նյութը (singular and plural nouns, countable and uncountable nouns), շատ պարզ և կարճ արտահայտություններ ծանոթանալու, իրեն և իր ընկերներին ներկայացնելու, նրանց հարցեր ուղղելու համար և պետք է կարողանա **արժևորել ընկերությունը ու ընկերասիրությունը:**

Տվյալ արժեքի ձևավորումն ու զարգացումը խիստ կարևոր է հատկապես փոքր տարիքի սովորողների պարագայում: Հուզազգայական ոլորտի զարգացման հետ մեկտեղ, ընկերասիրության կարևորության գիտակցումը կօգնի ավելի ամրացնել համակրանքի, ապրումակցման, կարեկցանքի, նրբանկատության և շատ այլ զգացումներ: Այն մեծապես կնպաստի նաև դասարանում բարիդրացիական, ջերմ և մտերմիկ մթնոլորտի ստեղծմանը: Տվյալ թեմայի

շրջանակներում միջառարկայական կապեր բաժնում առաջարկվում է ունկնդրել և երգել ընկերասիրության վերաբերյալ երգեր:

"Friend's song"

Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=bVCKj0T9-gc

Նկար 5.

Ես և իմ ընկերները թեմայի շրջանակներում առաջարկում ենք ունկնդրել **"Friend's song"** երգը (տե՛ս նկար 5): Երգը ներառում է ընկերասիրության, ընկերներ ունենալու կարևերության մասին գաղափարներ: Լեզվական նյութի տեսանկյունից երգում առկա են մեծ թվով բայեր, որոնք անընդհատ կրկնության շնորհիվ հրաշալի կերպով կտպավորվեն սովորողների մոտ:

Տվյալ երգի ունկնդրումից հետո կարելի է կատարել նմանատիպ վարժություն՝ սովորողներին հանձնարարել նկարագրել իրենց ընկերոջը, օգտագործելով մի քանի պարզ ածականներ:

4-րդ դասարան՝

1. Թեման է՝ **«Ազգություններ, իմ ազգությունը»**: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ որոշ երկրների, ազգությունների, լեզուների, քաղաքների (իր, ուսումնասիրվող լեզվի երկրների, հարևան երկրների, մայրաքաղաքների) անվանումները (Countries and Nationalities, Countries and their Languages), տրված քերականական նյութը (Quantifiers: A lot of, a little, a few, Possessive adjectives and pronouns) ինչպես նաև պետք է կարողանա **արժևորել հարգալից վերաբերմունքի դրսևորումը աշխարհի այլ երկրների, ազգությունների, լեզուների հանդեպ և ցուցաբերի դրանք ուսումասիրելու հետաքրքրություն:**

Հարգանքը մարդու ամենակարևոր բարոյական արժեքներից մեկն է, քանի որ հիմնարար է ներդաշնակ սոցիալական փոխազդեցության հասնելու համար: Հարգանքը պետք է լինի փոխադարձ և ծնված լինի փոխադարձության զգացումից:Հարգանքի կարևորագույն հիմքերից մեկն այն է, որ հարգվելու համար

անհրաժեշտ է իմանալ կամ սովորել հարգել, հասկանալ մյուսին, գնահատել նրանց հետաքրքրություններն ու կարիքները: Հանդուրժողականության և հարգալից վերաբերմունքի դրսևորման կարևորությունը առավել քան ակնառու է մեր օրերում:

“United Nation’s song”

Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=ghBSGl4024s

Նկար 14.

«Ազգություններ, իմ ազգությունը» թեմայի շրջանակներում առաջարկում ենք ունկնդրել " **United Nation’s song** " երգը (տե՛ս նկար 14): Երգի բովանդակության մեջ հստակորեն արտահայտված են հավասարության, հանդուրժողականության, հարգանքի, բարության գաղափարները: Լեզվական նյութի տեսանկյունից երգում առկա են բազմաթիվ ազգությունների անվանումներ, դերանունների գործածություն, որոնք անընդհատ կրկնության շնորհիվ հրաշալի կերպով կտպավորվեն սովորողների մոտ:

Տվյալ երգի ունկնդրումից հետո կարելի է կատարել նմանատիպ վարժություն՝ սովորողներին ցուցադրել տարբեր ազգությունների երեխաների նկարներ (տե՛ս նկար 15), անավանել այդ ազգությունները և խնդրել երեխաներին ասել, թե ինչ տարբերություններ և նմանություններ են նկատում իրենց և այդ երեխաների միջև: Վարժությունը կօգնի գաղափար կազմել մշակութային տարբերությունների մասին:

Նկար 15.

2. Թեման է՝ **«Առօրյա»**: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ առօրյային և ժամանցին բնորոշ բառապաշարը (Telling time and dates, Days of the Week, Leisure Activities, Ordinal numbers (1 -20)), տրված քերականական նյութը (Possessive 's, Prepositions of time, including in/on/at) ինչպես նաև պետք է կարողանա **արժևորել և ճիշտ կազմակերպել առօրյա պարտականությունները և սիրելի զբաղմունքները**:

Ինքնուրույնությունը, սեփական պարտականությունների վերաբերյալ իրազեկությունը չափազանց կարևոր է սովորողների վարքագծային զարգացման համար, իսկ առօրյայի պլանավորման շնորհիվ աշակերտները կծանոթանան ժամանակի տնօրինման արվեստին:

5-րդ դասարան

1. Թեման է՝ **«Նախասիրություն/հոբբի»**: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ թեմային առնչվող բառապաշարը (Entertainment, Directions, Sightseeings), տրված քերականական նյութը (Articles with countable and uncountable nouns, Past simple: Wh questions in the past simple), նախասիրությունների/հոբբիի նաև ազատ ժամանակը ճիշտ և արդյունավետ տնօրինելու ձևերը ինչպես նաև պետք է կարողանա՝ **եզրահանգումներ անել ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու շուրջ**:

Այս ձևով կարելի է օժանդակել սովորողներին բացահայտել սեփական հետաքրքրությունները և նախասիրությունները, զարգացնել ստեղծարար մտածողությունը: Եթե մանկությունից ու պատանեկությունից սկսած չեն ձևավորվում հստակ նախընտրություններ, ապա շատ մեծ է հավանականությունը սխալվելու և ընտրելու ոչ ճիշտ մասնագիտություն, որը կդառնա կյանքի ապագայի երաշխիք:

"Hobbies"

Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=xjX1qfRNvds

Նկար 22.

«Նախասիրություն/հոբբի» թեմայի շրջանակներում առաջարկում ենք ունկնդրել **“Hobbies”** երգը (տե՛ս նկար 22)։ Երգը պատմում է տարաբնույթ նախասիրությունների, ժամանցի կազմակերպման ձևերի մասին։ Լեզվական նյութի տեսանկյունից երգում առկա են նախասիրությունները նկարագրող արտահայտություններ, հարցական նախադասությունների (Wh questions) գործածություն։

Տվյալ երգի ունկնդրումից հետո կարելի է խաղալ խաղ նախասիրությունների վերաբերյալ։ Խաղատախտակի վրա պատկերված են տարաբնույթ նախասիրություններ (տե՛ս նկար 23), երեխաները փակելով աչքերը պետք է ընտրեն դրանցից մեկը և անվանեն այն։ Խաղը կօգնի ճանաչել նախասիրությունների տեսակները, զարգացնել տրամաբանությունը և բանավոր խոսքը։

6-րդ դասարան

1. Թեման է՝ **«Սպորտ»**։ Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ թեմային առնչվող բառապաշարը (National Sports, International Sports, Sportsmen), տրված քերականական նյութը (Adjectives: long and short adjectives, exceptions, not as...as, the same... as) ուսումնասիրվող լեզվի երկրում և Հայաստանում սիրված մարզաձևերը հայտնի և սիրված մարզիկների մարզական ուղին և

ձեռքբերումները, ինչպես նաև կարողանա **կարևորել սպորտի դերը առողջ ապրելակերպի և կամային հատկանիշների ձևավորման գործում:**

Իզուր չէ որ ֆիզիկական կուլտուրան-սպորտը անվանում են հոգու, մարմնի և մտքի զարգացման հենք, քանի որ այդքան կարևոր առողջ ապրելակերպի վարման գաղափարից զատ այն նաև անմասն չի մնում կամային հատկանիշների ձևավորման գործընթացից: Ցանկացած սպորտաձևում հաջողություններ գրանցելու համար պետք է համառություն և անկոտրում կամք դրսևորել, ինչը կարելի խթանել հենց այս դասի շրջանակներում:

3. Թեման է՝ **«Կենսակերպի փոփոխություն»**: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ թեմային առնչվող բառապաշարը (Healthy and Unhealthy lifestyle, Daily routines, Healthy Diet, Active Lifestyle), տրված քերականական նյութը (Future Time: will and going to, Modals: have to/should/ be able to, Connecting words: because, so, so that etc.), օրվա ճիշտ պլանավորման սկզբունքները, վնասակար սովորույթները, դրանց դրդապատճառներն ու հետևանքները ինչպես նաև կարողանա **կարևորել օրվա ճիշտ պլանավորումը, առողջ սնունդը, սպորտը և վնասակար սովորություններից զերծ մնալը՝ որպես առողջ ապերլակերպի նախապայմաններ:**

Առողջ ապրելակերպի վարման վերաբերյալ գիտելիքների հիմքերը հարկավոր է դնել հենց դպրոցից, կանխարգելել վտանգավոր սովորությունների տարածումը, հստակորեն ներկայացնելով դրանց թողած անդառնալի հետևանքները: Նմանատիպ արժեքների ձևավորումը կլինի առողջ սերունդ ունենալու երաշխիքներից մեկը:

Եզրակացություն

Այսօր օտար լեզուների դասավանդումը նպատակաուղղված է սովորողների լեզվահաղորդակցական կոմպետենցիաի զարգացմանը, նրանց՝ լեզվակրթության ընթացքում առկա դժվարությունները ինքնուրույնաբար հաղթահարելու հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև խոսքային կարողությունների զարգացմանը նպատակաուղղված առավել փոխներգործուն մեթոդների ու ռազմավարությունների յուրացմանը: Միաժամանակ, օտար լեզուների ուսուցումը կոչված է էլ ավելի ընդլայնել սովորողների հաղորդակցական մշակույթն ու համագործակցելու կարողությունները, որոնք դյուրացնում են նրանց մուտքը համաշխարհային հանրություն և արդյունավետ գործելու հնարավորություններ ընձեռում: Չէ որ ուսուցման ժամանակ օտար լեզուն օգտագործվում է մի կողմից որպես ուսուցման/ուսումնառության նպատակ, (օրինակ, հումանիտար հոսքում մայրենի լեզվի եւ գրականության հետ մեկտեղ օտար լեզուն կոչված է նպաստելու հետագա բանասիրական կրթության հիմքերի ստեղծմանը), մյուս կողմից՝ որպես միջոց այլ առարկաներ ուսումնասիրելու համար(օրինակ, ֆիզիկայի, քիմիայի, պատմության, աշխարհագրության եւ այլ առարկաների մասին օտարալեզու նյութեր հավաքել), ինչը հնարավոր է մասնագիտական տեքստերի ուսումնասիրման միջոցով:

Ներկայումս հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները՝ խնդիր է դրվում՝ բարձրացնել անհատի փորձն ու հմտությունները օտար լեզուն միջմշակութային հաղորդակցության մեջ կիրառելու նպատակով, մյուս կողմից՝ լեզվական կարողությունները կարիք ունեն լրացվելու արժեհամակարգային կոմպետենցիայով՝ երաշխավորելով հաջողակ հաղորդակցություն: Արժեքները գործում են որպես հասարակության անդամ հանդիսացող անհատների սոցիալական ներգրավվածությունն ապահովող կայմեր:

Ուսումնասիրելով ՀՀ հանրակրթական դպրոցի աշակերտների

արժեհամակարգի զարգացման հնարավորությունները անգլերենի ուսուցման գործընթացում երգի՝ որպես մեթոդի կիրառմամբ, եկանք այն եզրակացության որ՝

- Օտար լեզվի դասավանդման շրջանակներում կարևորվում է անդրադարձը արժեհամակարգի զարգացման անհրաժեշտությանը, քանի որ ներկայումս լեզվակրթության բնագավառը շեշտադրում է աշակերտի՝ բազմալեզու հաղորդակցության ժամանակ ակտիվ սոցիալական դերակատարումը արժեքների փոխանցման նպատակով:
- Երգերը կարող են ոչ միայն խթանել աշակերտների լեզվական կարողությունների զարգացմանը, այլ նաև պայմանավորված իրենց բնորոշ հոգեբանական ազդեցություններով երգերը կարող են նպաստել արժեքների ուղղակիորեն զարգացմանը, քանի որ յուրաքանչյուր արժեքի ընկալման գործընթաց զուգորդվում է զգացմունքների և ապրումների որոշակի շղթայով, որոնց շնորհիվ անհատը կարողանում է սահմանել տվյալ արժեքների կարևորություն ու դերը իր կյանքում:
- ՀՀ հանրակրթական դպրոցի ուսուցիչների հարցման արդյունքները
- փաստեցին նրանց կողմից երգի մեթոդի հաճախակի կիրրառման և մեթոդի նկատմամբ դրական տրամադրվածության մասին, այն ուսուցիչների կողմից մեծամասամբ կիրառվում է աշակերտների լեզվական կարողությունների զարգացման նկատառումներով, սակայն արժեքային բաղադրիչը ևս չի անտեսվում:
- Օտար լեզվի առարկայական ծրագրում արժեքների ձևավորումը հստակորեն շեշտադրված է՝ ընգրկելով համամարդկային, մարդասիրական, մշակութային, գեղագիտական, սոցիալական, էկոլոգիական կարևորագույն արժեքներ: Չափորոշչում երգի մեթոդի կիրառությունն ընդգրկում է 3-6-րդ դասարանները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Brown H. Principles of language learning and teaching. Englewood Cliffs, NJ, 1994, Prentice Hall Regents.
2. Т. А. ван Дейк. Язык. Познание. Коммуникация, М., 1989.
3. Bruner J. S., Goodnow J. J. and Austin G. A. A Study of Thinking. Transaction Publishers, 1995. .
4. Кубрякова Е. С. Об установках когнитивной науки и актуальных проблемах когнитивной лингвистики (Известия АН. Серия литературы и языка, 2004, т. 63, N 3.
5. Rogers C. Personal thoughts on Teaching and Learning, MerrillPalmer Quart, 1957, b. V, 3 (Summer).
6. КолесниковаИ.Л., ДолгинаО.А.,Англорусский терминологический справочник по методике преподавания иностранных языков, СПб.: Издво «РусскоБалтийский информационный центр „БЛИЦ"», «Cambridge University Press», 2001 г.
7. Երզնկյան Ե. (գլխ. խմբ.), Օտար լեզուները Հայաստանում. Գիտամեթոդական հանդես,ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, 20082014թթ.:
8. PāzārgādiA., Fārsi āsān (Easy Persian), Rāhnamā Press, Tehran, 2011, Books 15.
9. Աստվածատրյան Մ. Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, «Լույս», Երևան, 1985թ., 389 էջ https://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352/